

ՄՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Ամոլ

Հայ հին մատենագրութեան մէջ 5-րդ դարից աւանդուած եւ բարբառներում լայնօրէն տարածուած այս բառը նշանակում է լծակիցներին՝ միասին առնուած, երբեմն էլ դրանցից իւրաքանչիւրին: Բարբառներում ունի «գութանին լծուած անասունների առաջին գոյգ» իմաստը: Հնում հանդիպող ու-ով հիմքային ձեւի հետ միասին կան նաեւ -առով եւ իով յոգնակի ձեւեր. ամոլ ուղղական ձեւի փոխարէն կայ նաեւ ամոլի ձեւը:

Ստուգաբանութեան եղած փորձերը (Հմմտ. Աճառեան, ՀԱԲ, 1, էջ 160)¹, հետո՛ւ են հաւանականութիւնից, եւ ճիշտ է Աճառեան, որ նրանք դրել է կասկածելիների շարքում:

Նկատի ունենալով ամուսին բառի կազմութիւնը՝ ամ- «համա-» (հ.-ե. *som- կամ *smo-) + ու- (հ.-ե. *euk-/uk- վարժուել, սովորել, ընտելանալ», որտեղից ու-ամի) + ին (հ.-ե. *-eno- ածանց), որպէս «համընտել՝ միասին (իրար) ընտելացած», կարելի է որպէս ամոլ բառի առաջին բաղադրիչ առանձնացնել ամը². ակնյայտ է, որ -ոլ կամ -ոլի բաղադրիչի մէջ մենք ունենք հնդեւրոպական որեւէ արմատի մնացորդ: Ամէնից հաւանական է նրա աղբիւրը համարել *pel- «քշել» արմատի *pol- ձայնդարձային ձեւը. Հմմտ. լատ. pellō, -ere «խփել, հրել, քշել», opilio (*oui-pilio-) «հովիւ», բառացի՝ «ոչխար քշող» ամոլ (ի)-ի սկզբնաձեւը պիտի լինէր sm-po-l(ü)o- «միասին քշող», աւելի քիչ հաւանական է -ոլ-ի մէջ տեսնել *el- «քշել, շար-

ժել» (այստեղից հայ. ելանել) կամ *mel- «անդամ, յօղեր» (Հմմտ. յուն. μέλος «անդամ») արմատներից մէկնումէկը:

Գեղնի, գղնիկ

Գեղնի-ն եւ նրա գղնիկ տարբերակը հանդիպում են միայն Երեմիայի բառգրքում՝ «հայ» մեկնաբանութեամբ: Հ. Աճառեան (ՀԱԲ, 1, էջ 536) բերում է իր արտայայտութեամբ «այս հետաքրքրական բառը» առանց որեւէ մեկնաբանութեան: Երեմիայի բառարանի քննական նոր հրատարակութեան մէջ³ նոյնպէս որեւէ մեկնաբանութիւն չի տրուում:

Եթէ բառի մեկնութեան մէջ աղաւաղում չկայ, եւ եթէ այն որեւէ կապ չունի գիւղ, սեռ. գեղջ բառի հետ՝ փոխաբերական-ընդհանրացական գործածութեամբ, ապա կարելի է կարծել, որ գեղնի-ն հայերէնի պահպանած հնագոյն ինքնանուանումներից մէկն է: Ինչպէս յայտնի է, ժողովուրդների շատ ինքնանուանումներ սկզբնական առումով նշանակել են պարզապէս «ժողովուրդ», «մարդիկ», այսինքն՝ հաւաքական հասկացութիւններ են պարունակել. այսպէս, գերմանացիների deutsch անուանումը գալիս է հ.-ե. *teuta-ից, որ նշանակում է պարզապէս «մարդկանց բազմութիւն, ժողովուրդ», այլեւ այդ ժողովուրդի բնակութեան երկիրը (Հմմտ. գոթ. biuda, հ.վ. գերմ. diot(a) «ժողովուրդ», հ.իռլ. tuath «ժողովուրդ, ցեղ, երկիր», բրետ. tud «մարդիկ», լատվ. tauta «ժողովուրդ»). չեչենների noxéo անուանումը կապուած է naX «մարդիկ, ժողովուրդ» արմատի հետ. աֆրիկեան բանտու անուանումը նշանակում է պարզապէս «մարդիկ» (Հմմտ. եզակի mu-ntu «մարդ»): Օրինակների թիւը կարելի է բազմացնել, բայց ամենատարբեր բնոյթի լեզուներից բերուած՝ վերելի երեք օրինակները բաւական են այդ բանում համոզուելու համար:

¹ Յօդուածում կիրառուած են հետեւեալ համաօտարգրութիւնները.

ՀԱԲ - Հ. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, 2-րդ հրատ., 1-4, Երեւան, 1971-1979.

ՆՀԲ - Նոր բառգիրք հայկազեան լեզուի, 1-2, Վենետիկ, 1836-1837:

IEW - J. Pokorny, Indogermanisches etymologisches Wörterbuch, 1-2, Bern und München, 1959-1969.

² Նոր հայկազեան բառգիրքը մեկնաբանում է համ + ուլն, բայց այժմ յայտնի է, որ հայ. ամը պիտի տարբերել իրանական ծագում ունեցող (հ)ամ-նախածանցից. հնարուոր է, ի հարկէ, ենթադրել, որ դրանք խառնուել են:

³ Հմմտ. Բառգիրք հայոց. քննական բնագիրը, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները Հ. Մ. Ամալեանի, Երեւան, 1975, էջ 64 եւ 67:

Նկատի ունենալով ասուածը գեղնի-ի աղ-
բիւրը կարելի է համարել Տ.-ե. *uel- արմատը,
որին պատկանում են յուև. eilη (*Fελv-), ին
(*Fιλνα) «խուճ, խմբակցութիւն, ընկերակցու-
թիւն», ἄλια «ժողով», սլավ. валъ «բազմու-
թիւն, կոյտ» (ռուս. валом «բազմութեամբ») եւ
(*g- ածականով) Տ. հնդկ. vārga- «ջողատ,
խուճ», լատ. volgus, vulgus «ժողովուրդ» եւ
այլն:

Գղնիկ-ի համար գեղնի-ի համեմատութեամբ
կարելի է ենթադրել կա՛մ ձայնդարձի տար-
բեր աստիճան (հմմտ. յուև. eilη/իլη), կա՛մ է
ձայնաւորի սովորական հնչիւնափոխութիւն
(հմմտ. աւեղն - աւղան), կա՛մ էլ, թերեւս,
բարբառային հնչիւնափոխութիւն. քիչ հաւա-
նական է գղնիկ-ի իլ-ը դիտել որպէս հաւաքա-
կանի նիշ (ինչպէս մարդիկ բառում):

Գիրկ

5-րդ դարից մատենագրութեան մէջ հանդի-
պող եւ բարբառներում տարածուած այս բա-
ռը այժմ էլ հանդիպում է գրական լեզուում
միեւնոյն իմաստով՝ «գոգ, ծոց», որից գրկել:
Որեւէ ընդունելի ստուգաբանութիւն չի
առաջարկուած:

Գիրկ բառն ակնյայտօրէն հնդեւրոպական
ծագում ունի եւ գալիս է *ueig- «ծուել, կո-
րացնել, թեքել, ոլորել» արմատի *uig-ro-
ածանցեալից՝ *r-ի՝ հայերէնին յատուկ դրա-
փոխութեամբ (հմմտ. մերկ < *neguro-, մերձ
< *meghri-, երկան < *gurnān եւ այլն): Իմաս-
տային յարաբերութիւնը նոյնն է, ինչ այդ ար-
մատին պատկանող Տ. իսլ. veikja «ծուել, կո-
րացնել, թեքել» եւ vik «ծովածոց, ծովախորշ»,
այլեւ նորվ. բրբ. vik «փոքրիկ անկիւն, ծրու-
ուածք, կորուսիւն»: Նոյն արմատի մի այլ՝ *-k-
ածականով ձեւից են ծագում Տ.հնդկ. vi-vyākti
ընդգրկում է, պարսիակում է», vyācas- «ընդար-
ձակ տարածութիւն», յուև. eixω «նահան-
ջել, գիշել», լատ. vincio, -ire «փաթաթել, կա-
պել, շրջապատել, գօտեւորել, պաշտպանել» եւ
այլն:

Ածանցակազմական առումով հայերէնի
բառը բացարձակ զուգահեռ ունի լիտվ. vigrūs
«առոյգ, աշխոյժ, դիւրադարձ» բառի մէջ, որ ու-
նի եւ *-k-ով տարբերակ՝ vikrūs:

Թորթոր

Այս բառը մտել է Հին հայկագեան բառգրքի
եւ ապա Հ. Աճառեանի «Հայերէն արմատական
բառարանի» մէջ Երեմիայի բառարանից, որ-
տեղ այն մեկնուած է «յորդոր, փափաք կամ
անձուկ»⁴: Այս մեկնութեամբ այն ակնյայտօրէն
միանում է նոյն բառարանում աւանդուած մի
այլ՝ քրթրակ «յորդորախօս, կամ թարգման»
բառի հետ⁵: Վերջինս հանդիպում է նաեւ 5-րդ
դ. դասական շրջանի հայ մատենագրութեան
մէջ եւ բառարաններում բացատրուած է որպէս
«ճարտարախօս»՝ նախնական «դիւրադարձ
(լեզու)» (ըստ ՆՀԲ-ի, կամ «շուտ դարձող (լե-
զու)» (ըստ ՀԱԲ-ի) իմաստներէից: Հ. Աճառեան
միացնում է քրթրակ արմատին (հմմտ. քրթրական
«սրընթաց»), իսկ Պետրոսն կապում է Տ.-ե.
*tor- «բարձրաձայն» արմատի հետ, որ ընդուն-
ւում է Յ. Պոկոռնիի (IEW, 1, էջ 1089) եւ,
կասկածով, մեր կողմից⁶: Այս արմատին է
յանգեցում, ինչպէս յայտնի է, ըն-թեռնում
բայը:

Թորթոր բառը «յորդոր» իմաստով հանդի-
պում է հոմանիշների հին բառարանում⁷ եւ
միացում քրթրակ բառի հետ. թերեւս սա է
եղել Երեմիայի բառարանի աղբիւրը: Այստե-
ղից կարելի է եզրակացնել հետեւեալը. 1) ըն-
թեռնում, քրթրակ «յորդոր» եւ քրթրակ,
«յորդորիչ, ճարտարախօս» բառերը ծագումնա-
բանօրէն կապուած են եւ ներկայացնում են
ձայնդարձի երեք տարբեր աստիճաններ՝ *ter-,
*tor-, *tōr-(վերջին երկուսը կրկնութեամբ). 2)
հայերէնը հնարաւորութիւն է տալիս հնդեւրո-
պականի համար վերականգնել արմատի *ter-
ձեւ՝ համապատասխան *ter-/tor- հերթագայու-
թեամբ եւ «բարձրաձայն խօսել» իմաստով. 3)
թրթրակ-«ճարտարախօս» եւ քրթրական
«սրընթաց» բառերի նմանութիւնը եւ ստուգա-
բանական կապը հնարաւոր է, եթէ վերջինս ոչ
թէ միացնենք քրթրակ արմատին, այլ բխցնենք
Տ.-ե. *ter- «անցնել, հասնել, թափանցել» ար-
մատից. Յ. Պոկոռնի Տ.-ե. *tor-ը համարում է
վերջինիս մի ճիւղաւորումը. հմմտ. յուև. τորός

⁴ Հմմտ. Բազիլից հայոց, Երեւան, 1975, էջ 122:
⁵ Նշ. աշխ., էջ 123:
⁶ Г. Б. Джауныя, Л. А. Сараджнева, Ц. Р. Арутюнян, Очерки по лексикологии армянского языка, Ереван, 1983, с. III.
⁷ Հմմտ. Մատենադարանի No. 2372 ձեռագիր:

«թափանցող, սրանցիկ. հասկանալի, պարզ»
(Տ.հնդկ. tarā-«կտրուկ, արագ, սրանցիկ»),
τετωρήσω «բարձրաձայն եւ հասկանալի
ձեւով կ'ասեմ». կրկնական ձեւի համար հմմտ.
սլավ. *tortoriti (ռուս. тороторить) «շաղակ-
բատել»:

Կինք

Մատենագրութեան մէջ 5-րդ դարից աւանդ-
ուած այս բառը նշանակում է «ոտքի ներբան,
հետք»: Թէեւ Հ. Աճառեան (ՀԱԲ, 2, էջ 591) բե-
րում է կինք ձեւով, բայց Բ-ն յոգնակերտ մաս-
նիկ է, իսկ եզակի ձեւը պահպանուել է գ-կնի
«ետեւից. յետոյ» բառի մէջ. կինք-բ եւ գկնի ձեւե-
րի կազմութեան եւ իմաստային փոխյարաբերու-
թեան համար հմմտ. հետ-բ եւ գհետ: Այս ար-
մատը բարբառներում չի պահպանուել, որ խօ-
սում է նրա՝ գրական լեզուին յատուկ լինելու
մասին:

Ստուգաբանութեան եղած փորձերը մեծ
մասամբ անհաւանական են. ճիշտ չէ, յատկա-
պէս, կապ տեսնելը կնիք, կինք եւ շումբը. ցի
«հետք» բառերի միջեւ (Կարստ): Հ. Աճառեան
(ՀԱԲ, 2, էջ 591) նշում է կինք-բ-ի՝ քարթուելա-
կան մի շարք բառերի հետ ունեցած նմանութիւ-
նը (վրաց. ukan «յետոյ. յետեւում», kenox,
մեգր. keni «դէպի ետ» եւ այլն), բայց չի կա-
րողանում որոշել սրանց կապի բնոյթի հարցը:
Նշուած քարթուելական բառերի ընդհանուր
ծագումը նորագոյն աղբիւրները չեն նշում⁸:
Եթէ նմանութիւնը պատահական չէ, ապա հնա-
րաւոր է երկու ենթադրութիւն. հայերէն բառը
ծագում է կամ քարթուելական աղբիւրից կամ
քարթուելական բառերի հետ միասին՝ մի ընդ-
հանուր աղբիւրից: Այդպիսի աղբիւր կարող էր
լինել ուրարտերէնը, որ իր հերթին կարող էր
աղբիւր ունենալ ակկադ. qinnatum «յետոյց.
յետեւի կողմ» բառը⁹: Հնարաւոր է, ի հարկէ,
ենթադրել նաեւ հայերէնի անմիջական փոխա-
ռութիւն ակկադերէնից:

Կից

5-րդ դարից սկսած հայ մատենագրութեան
մէջ լայն տարածում ունեցող եւ վերջածան-
ցային արժէք ստացած այս արմատը ունի «կից,
կպած. գոյգ. անասնի ոտքերի կցատեղ՝ ետ-
նամաս. ձեռքերի երկու ակերի կցուածք»
իմաստները. վերջին իմաստն արտայայտում է
նաեւ ուշ աւանդուած ձայնդարձային կուց
ձեւով: Ստուգաբանութեան եղած փորձերը
Հ. Աճառեան (ՀԱԲ, 2², էջ 596) իրաւամբ
անհաւաստի է համարում: Արմատը լայն գոր-
ծածութեան մէջ է բարբառներում եւ նոյնիսկ
փոխառուել է վրացերէնում՝ kicva («կցում,
միացում») ձեւով:

Մենք հակուած ենք այս արմատը կապել ու
յուև. γείτων «հարեւան, դրկից» (գոյ.), γείτ-
όσυνος «հարեւան» (ած.) բառերի γείτ- ար-
մատի հետ եւ վերականգնելու ընդհանուր
*geit- «կից լինել» արմատը, որից *-so- կամ *-sk-
ածանցով կարող էր կազմուել հայերէնի համար
հիմք հանդիսացած *geit-so- կամ *geit-sk- տիպի
մի նախածեւ:

Կիքրիս

Այս բառը մէկ անգամ գործածուած է Փիլոն
Երաչեցու «Յաղագս նախախնամութեան»
աշխատութեան թարգմանութեան մէջ. «Եւ
զհաւասար նմին է տեսանել եւ ի վերայ թռչնոց,
քանզի կիքրիս, սալամունք, եւ հակալք, եւ
կաքալք, եւ սազացն եւ խորդոց ազգք յանա-
պատս փախչին»¹⁰: Փիլոնի մեկնութիւններում
(«Լուծմունք Փիլոնի») այն բացատրուած է որ-
պէս «տուռէճ» («դուռաճ, սալամ». ըստ Աւ-
գերեանի լատիներէն թարգմանութեան՝ turdus)
Հ. Աճառեան (ՀԱԲ, 2², էջ 599), այլեւ Ջ. Գրե-
պին, որ յատուկ աշխատութիւն է նուիրել հայ-
կական թռչնանուններին¹¹, որեւէ ստուգա-
բանութիւն չեն տալիս:

Այս բառի աղբիւրը յուև. κευχρίς, -ίδος «կո-
րեկահաւ, գորշ դրախտահաւ» (Emberiza calan-
dra), προσαιηα բառն է, որ իր հերթին ծագում է

⁸ Ա. Զիգորավա, ճանա-մեզրելա-վրացերէն համե-
մատական բառարան, Թբիլիսի, 1938 (վրաց.). Г. А. Климов, Этимологический словарь нартвельских языков, М., 1964.
⁹ Հմմտ. W. von Soden, Akkadisches Handwörterbuch, 2, 1972, S. 921-922.

¹⁰ Փիլոնի Երաչեցուի Բանք երեք չեւ ի Լոյս ընծա-
յեալք, Ա. Վենետիկ, 1822, էջ 103:
¹¹ J. A. C. Greppin, Classical and Middle Armenian bird names, Delmar, New York, 1978, p. 90-91.

κέρχρος «կորեկ» բառից (որպես կորեկով սըն-
ւող. հմմտ. ուուս. просяна, просо «կորեկ»
բառից):

Կործ

Այս արմատը 5-րդ դ. մատենագրութեան մէջ
գործածուած է կործան «գլխիվայր տապա-
լած», կործանել «գլխիվայր շրջել, կործել.
տապալել, քանդել, ջնջել» ձեւերում: Արմատա-
կան ձեւով հանդիպում է միայն միջին հայերէ-
նում եւ բարբառներում. հմմտ. միջ. հայ. ի
կործ առնել «գլխիվայր շրջել (ամանի մա-
սին)»: Հ. Պետերման, Ա. Մեյէ, Հ. Պեդերսոն
կապում են կոր- (կորնչիւմ «կորչել», կորու-
սանել «կորցնել») արմատի հետ, իսկ Ն. Յա.
Մառ փորձում է բխցնել յարեթական krs ար-
մատից (հմմտ. վրաց. gwerdi «կող. կողմ»): Այս
ստուգաբանութիւնները ակնյայտօրէն անըն-
դունելի են:

Եթէ նկատի ունենանք, որ կործ արմատի
սկզբնական իմաստը կապուած է շրջելու, շուռ
տալու գաղափարի հետ (ի կոր կործանել
արտայայտութիւնը վկայում է երկու արմատնե-
րի կապի գիտակցման մասին), ապա ակնյայտ
կըլինի, որ կործը ծագում է հնդեւրոպական
*ger- «պտտել, փաթաթել» արմատի *g- ածա-
կանով ձեւից՝ կործ < *gor-g-: Հնդեւրոպա-
կան յիշեալ արմատը, որից ծագում են նաեւ
հայ. կոր, բրբռ. կեռ բառերը, ներկայացուած է
տարբեր ածականներով, այդ թւում նաեւ քմայ-
նացած եւ ոչ քմայնացած ետնալեզուային-
ներով, հմմտ. յատկապէս բալթիական ձեւերը,
որոնք ենթադրել են տալիս հնդեւրոպական
քմայնացած ետնալեզուային (ոնգային միջնա-
մասնիկով)՝ լիտվ. grąžyti «պտտել, շուռ տալ.
ոլորել», grežti «գայլիկոնել, ծակել», gráizyti,
graižyti գայլիկոնել, ծակել. շուռ տալ. ճկել.
տապալել»: իմաստային առումով հմմտ. հ.
անգլ. cringan «ընկնել», crincan «կուում ընկ-
նել» եւ այլն: Մի այլ ածականով ձեւից է գալիս
հայ. կարթ բառը:

Անհնար չէ կարծել, որ *ger- արմատի *gorgi-
ձեւից է ծագում կորնայի նահանգի անունը եւ
նրա հետ կապուող կորն «ծուռ, թիւր» ար-
մատը. առաջինը պիտի նշանակած լինի «գո-
գաւորութիւն», հմմտ. նաեւ կիրն < *gērgi-(?):

Հաղ

Այս արմատը հանդիպում է միայն հաղորդ
«մասնակից, կցորդ» բառի եւ նրա ածանցեալ-
ների կազմում: Հ. Աճառեան (ՀԱԲ, 3², էջ 14)
նշում է «կից, միասին, հար» իմաստը: Ստուգա-
բանութեան սակաւաթիւ փորձերը յայտօրէն
անհաւաստի են:

Հաղը բացայայտ գուգահեռ ունի ալբ. palë
«գոյգ, խումբ, կողմ, կողմնակցութիւն. ծալք»
բառի մէջ, որ ծագում է հ.-ե. *pel- «ծալել» ար-
մատից ածանցուած *pol-nā նախածեւից: Հ.-ե.
*pel- արմատը կարող էր հէնց այդ *no-մաս-
նիկով կամ առանց դրա հիմք տալ հայե-
րէն բառի համար. առաջին ենթադրութեան
համար հմմտ. *pel-nu-mi > հեղում, որտեղ
առկայ է միեւնոյն *ln > դ փոփոխութիւ-
նը:

Այս ստուգաբանութեամբ հաղ «կից» ար-
մատը կապում է հաղ (բ. հեղ) «անգամ» բառի
հետ, որ Յ. Պոկոնու բառարանում ճիշտ
կերպով յատկացւում է յիշեալ արմատին հմմտ.
յու. ἄ-πλόος «պարզ» («միակի») եւ δι-πλόος
«երկակի» (IEW, 1, էջ 802): Հ. Աճառեան
(ՀԱԲ, 3², էջ 13-14) հաղը յանգեցնում է
*pel- «խփել» («խփելով կամ հրելով շարժել,
քշել») արմատին, որ Յ. Պոկոնուի առանձ-
նացում է *pel- «ծալել» արմատից, թէեւ
դրանք ստուգաբանօրէն կապուած տարբերակ-
ներ է համարում:

Մառախոլ

Մառախոլ բառը 5-րդ դ. սկսած լայն տա-
րածում ունի հայ մատենագրութեան մէջ եւ
գործածական է արդի գրական լեզուում: Ունի
նաեւ մառախոլ տարբերակը. լ-ն սովորական
է յատկապէս ու-ի սղման դէպքում՝ մառախոլա-
մած, մառախոլապատ, մառախոլիմ եւ այլն.
սակայն հմմտ. մառախոլիմ, մառախոլուտ,
որոնց մէջ ը-ն հաւանաբար արտասանուել է:
Հնից սկսած գիտակցուել է որպէս բարդութիւն՝
մառ եւ խոլ բաղադրիչներով. Հ. Աճառեան
(ՀԱԲ, 3², էջ 262) մառ-ը մեկնում է «մէգ,
մշուշ» եւ նոյնացնում մառն «մէգ, մշուշ» բառի
հետ, իսկ երկրորդը համարում է «անյայտ,
որովհետեւ ուրիշ տեղ չէ գործածուած»:
Մառ(ն)-ը ակնյայտօրէն կապուած է նաեւ

մառալ եւ մառ «մթութիւն» (բրբռ. մարիլ.
մարմրիլ) արմատների հետ, որոնք գալիս են
հ.-ե. *mer-«առկայծել» արմատից (հմմտ. յոււ.
μαρφνός «մթին, մթագոյն», ուուս. բրբռ. mapa
«պատրանք. մէգ, մառախոլ, marevo «միրաժ,
պատրանք», мерцать «առկայծել»)՝ թերեւս
խառնուելով mer- «սեւացնել» արմատից եկող
ձեւերի հետ¹²:

Խոլը կամ խոլ արմատը ամենայն հաւանա-
կանութեամբ ծագում է հ.-ե. *(s)keu-«ծածկել»
արմատի *khu-lo-տարբերակից, որից ծագում է
նաեւ խոլ «խրճիթ» բառը: Մառախոլ-ի
խոլ-ի մէջ կարող էր պահպանուած լինել նա-
խածեւի իմաստային մի այլ տարբերակը. հմմտ.
հ. Ֆրիդ. sküle «խրճիթ», մ. ստ. գերմ. schüle
«թաքստոց» եւ այլ կազմիչներով՝ լատ. ob-skū-
rus «մութ», հ. իսլ. ský «ամպ, մթագնած», sku-
mi «աղջամուղջ, մթնշաղ» եւ այլն:

Հնարաւոր է ենթադրել, որ մառախոլ-ը
հին բարդութիւն է, որ յետագայում ենթարկուել
է յօդակապային բարդութիւնների համաբանա-
կան ազդեցութեան:

Մեստ

Դեռեւս 5-րդ դ. յուշարձաններում պահպան-
ուած այս արմատը հանդիպում է միայն բա-
ղադրութիւններում՝ Բուգանդի մօտ հաս-
տամեստ բառում եւ Փիլոնի մօտ՝ մեստիմ
բայի մէջ. վերջինս բառարաններում մեկնում է
«հաստատուել, ամրանալ». Փիլոնի մեկնու-
թիւններում («Լուծումն Փիլոնի») բացատրում
է «կազմուել» (մեստեալ «կազմեալ»): Թերեւս
սրա հիման վրայ է նրեմիայի բառարանի ձեռա-
գրերից մէկում գրուած «մեստ. սերտ, կամ
կազմ»¹³ մեկնութիւնը, որ միւս ձեռագրերում
չկայ. սակայն բոլոր ձեռագրերում առկայ է
«մեստրեալ. սերտ» մեկնութիւնը: Հ. Աճառեան
(ՀԱԲ, 3², էջ 305) մեստ արմատը բացատրում
է «պինդ, ամուր, հաստատուն»:

Մեստ արմատի որեւէ հաւաստի ստուգա-
բանութիւն չի առաջարկուած. Կարստի փորձը
մագդ բառի հետ միասին կապելու շուրջ. mes,

¹² Հմմտ. Գ. Բ. Ջահուկյան, Ստուգաբանութիւններ, ՊԲՀ, 1965, 1, էջ 258-259.
¹³ Բառգիրք հայոց, Երեւան, 1975, էջ 407:

mis «բազմութիւն» բառի հետ չի կարելի լուրջ
համարել:

Մենք հակուած ենք այս բառը կապելու յոււ.
μεστός «լի, լեցուն, լեփ-լեցուն, համակուած,
տոգորուած, յագեցած» բառի հետ, բայց պարզ
չէ կապի բնոյթը՝ ընդհանուր ծագում, թէ՛ փո-
խառութիւն: Յունարէնից փոխառութիւն լինե-
լը կասկածելի է, եթէ նկատի առնենք իմաս-
տային տարբերութիւնը եւ -ոց վերջաւորու-
թեան բացակայութիւնը: Սակայն դժուար է բե-
րել նաեւ բնիկ հնդեւրոպական լինելու հաւաս-
տի ապացոյցներ: Յ. Պոկոնու բառարանում
(IES, 1, էջ 706) կասկածով վերականգնուած է
*med-«ուռչել» արմատը, եւ բերուած են նաեւ
յոււ. μέζεα, μέδεα «տղամարդու սեռական
օրգաններ» եւ մ. իսլ. mess (*med-tu-)
«(խոզ)կաղին. կաղ նաբտում» եւ այլ բառեր,
որոնց իմաստային փոխարարբերութիւնը կար-
ծես ճշգրտում է հայերէնում: Այս ստուգա-
բանութեան ճշտութեան դէպքում պէտք է նը-
շել, որ նախ հայերէնին յատուկ է *d-t > ստ
անցումը, ինչպէս յունարէնին (հմմտ. նաեւ
մաստ < *mad-to-) եւ երկրորդ՝ մենք գործ
ուենք հայ-յունա-կելտական գուգաբանու-
թեան հետ:

Յայտ

5-րդ դ. սկսած հայ մատենագրութեան մէջ
լայն գործածութիւն ունեցող այս արմատը
հանդիպում է ինչպէս անկախաբար, այնպէս էլ
տարբեր բաղադրութիւնների կազմում: Առանձ-
նապէս գործածական է նրանից -նի ածանցով
կազմուած յայտնի ածականը: (հմմտ. գաղտ-
նի):

Ստուգաբանութեան առկայ փորձերը ա-
կնյայտօրէն անհաւաստի են (հմմտ. ՀԱԲ, 3²,
էջ 382):

Մենք հակուած ենք այն բխցնելու հնդեւրո-
պական *ai- «այրել, լուսաւորել» արմատի *d-
աճականով ձեւից: Այս արմատը հանդէս է գա-
լիս տարբեր աճականներով եւ ածանցներով՝
*ai-dh-, *aier-, *aios-, *aisk-, *ai-tro-: Մրանցից
*aisk- «պարզ, լուսաւոր» նախածեւից է ծագում
լիտվ. aiškus, iškus «պարզ, որոշ», рачный
«պարզ», истра «կայծ» բառերը:

Յոյս

5-րդ դարից լայնորէն աւանդուած եւ բարբառներում բաւականաչափ տարածուած այս բառը մինչեւ այժմ էլ նոյնութեամբ պահպանել է իր իմաստը. միայն Համչէնի բարբառում նշանակում է «ցանկութիւն, փափագ»: Տեղ-տեղ բարբառներում այն փոխարինուել է փոխառեալ ումուռ բառով: Եղած ստուգաբանութիւններէրից (Հմմտ. Հ. Անառեան, ՀԱԲ, 3³, էջ 405) քիչ թէ շատ հաւանական է Հ. Պեղերսոնի համեմատութիւնը ուսանիմ բայի հետ, այսինքն՝ բըխեցումը հ.-ե. *euk-«սովորել, վարժուել, մտերիմ լինել» արմատից, որտեղից հ. հնդկ. ucayati «սովոր է», հ. իռլ. to-ucc-«հասկանալ, ըմբռնել», լիտվ. junkti «սովորել, ընտելանալ», ռուս. учить «սովորեցնել» եւ այլն: Այս ստուգաբանութիւնը չի ընդունուել Հ. Անառեանի կողմից, բայց մեր կողմից հաւանական է համարուել:

Այժմ մեզ աւելի հաւանական է թւում յոյս բառի համեմատութիւնը սլաւոնական համեմատութեան հետ՝ հ. սլաւ. уповаѣти, բուլղ. уѡам се, սլովէն. ūpati, ռուս. уповать «յուսալ, յոյս դնել, յոյս ածել, ապահինել» եւ լեհ. pwa «յոյս», pewny «յուսալի»: Այս բառերը նոյնպէս, ինչպէս հայերէն բառը, չունեն հաւաստի ստուգաբանութիւն: Համեմատութիւնը հ. հնդկ. pāvate «մաքրում է, պարզում է» (Ռոզվադովսկի) կամ լիտվ. puti «փտել» (Ջուբատի) բառերի հետ չի կարելի լուրջ համարել. անհաւանական է նաեւ Պիզանի կարծիքը՝ բառի հին գերմանիզմ լինելու մասին (Հմմտ. գերմ. hoffen «յուսալ»¹⁴):

Հայերէն եւ սլաւոններէն բառերը ենթադրել են տալիս հնդեւրոպական *peu- «յուսալ» արմատ՝ հայերէնի դէպքում *-k- ածականով. հնարաւոր է այս արմատի կապը հ.-ե. *peu- «հետազօտել, հասկանալ» արմատի հետ, որտեղից ծագում են յուն. νη-πιος, νη-πύ-τιος «անբան, անհասկացող, մանկական», լատ. putō. -are «կլռադատել, գնահատել, կարծել», ռուս. пытать չարչարել. փորձել, հետամուտ լինել. հարցուփորձ անել», բուլղ. питам «հարցնել», սլովակ. pytat' «խնդրել, աղաչել», թիս. Ա. put-k «դատել, բաժանել, տարբերել» բառերը:

¹⁴ М. Фасмер, Этимологический словарь русского языка, IV, М., 1973, էջ 164:

Այս դէպքում պէտք է արձանագրել, որ սլաւոնական երկու արմատները կապուած են, եւ որ հ.-ե. *peu-արմատը հանդիպում է *-t-, *-k- ածականներով:

Նուաղ

Այս արմատը 5-րդ դարից սկսած հանդիպում է ինչպէս ածականական անկախ գործածութեամբ, այնպէս էլ որպէս բայահիմք՝ նուաղիմ ձեւով. մինչեւ այժմ էլ տարածուած է բարբառներում. առաջին դէպքում նշանակում է «տրկար, թոյլ, աղօտ, մեղմ», երկրորդ դէպքում՝ «աղօտանալ, թուլանալ, մարել. տկարանալ, հիւժուել. թալկանալ, ուշադնաց լինել»: Բարբառներում առկայ են ինչպէս, «նուաղել, ուշադնաց լինել», այնպէս էլ «ափսոսալ, աւաղել» (Ակն) իմաստները. հանդիպում են նաեւ նուաղկտալ (նուաղկտոց) «նուաղել, սիրտը խառնել» (Վան), նուաղկոտ «ընկնաւոր, լուսնոտ» (Ղազարի) ձեւերը:

Հ. Անառեան (ՀԱԲ, 3², էջ 468) բաւարարուում է հետեւեալ նշումով. «նման ձեւեր են ներկայացնում լիթ. nōvyti «չարչարել, տրորել, վնասել», չեխ. unaviti «յոգնեցնել», ռուս. учить «տխրել», քաջութիւնը կորցնել, թուլանալ», գոթ. naurops «կարիք», որոնց նախածեւը Trautmann 201 դնում է *nuio «անցնիլ, գունաթափ լինիլ» եւ այլն»:

Ժ. Դիւմեղիլ (BSL, 40, էջ 48 եւ յջ.) նուազ-ը դիտում է որպէս հ.-ե. *ne- «ան-» ժխտականով կազմութիւն՝ *ual- «ուժեղ լինել» արմատից: Այդ ստուգաբանութիւնը բերում է Յ. Պոկոռնիի կողմից (IEW, 1, էջ 756) եւ կասկածով նշում նաեւ հայերէնի հնդեւրոպական ծագման բառերի տարածական բաշխման՝ մեր կազմած ցանկում¹⁵:

Հ. Անառեանի նշած «նմանութիւնը» նոր փաստերի լոյսի տակ պէտք է դիտել որպէս ոչ պատահական եւ համարել Ժ. Դիւմեղիլի ստուգաբանութիւնից աւելի հաւանական: Յ. Պոկոռնի (IEW, 1, էջ 756) Հ. Անառեանի բերած

¹⁵ Г. Б. Дняуян и др., Очерни по сравнительной лексикологии армянского языка, Ереван, 1983, с. 110.

Յիռ

Այս բառը լայնորէն տարածուած է 5-րդ դ. հայ մատենագրութեան մէջ՝ որպէս յուն. ὄνα-γρος «ցիւռ, վայրի էջ» բառի թարգմանութիւն: «Աշխարհացոյց»-ի մէջ ցիւռը յիշատակուած է որպէս Պարսկահայքում տարածուած կենդանի:

Յիռ բառի ստուգաբանութիւնները (ՀԱԲ, 4⁸, էջ 455), յատկապէս պրսկ. gur համանիշի հետ կապելու փորձը չի կարելի լուրջ համարել: Միանգամայն հնարաւոր է բառիս հնդեւրոպական ծագումը: Ամէնից աւելի հաւանական է ցիւռը յատկացնել հ.-ե. *sker- «ցատքել» արմատին. մասնաւորապէս մօտ է ցիւռ բառը ձեւով (*-s- ածականով) եւ իմաստով՝ իռլ. skjarr «երկչոտ, վեհերոտ» (* «վեր ցատքող» կամ «գողացող») բառին. հայերէնի համար ենթադրելի է *sker-s- նախածեւ: Այս արմատից կազմուել են կենդանիներ նշանակող բազմաթիւ բառեր հնդեւրոպական տարբեր լեզուներում:

Գ. Բ. ԶԱՀՈՒԿԵԱՆ

ձեւերը դնում է *nāu-/neu-/nū-արմատի տակ եւ նրա համար վերականգնում «չարչարել մինչեւ ուժասպառութիւն, մահացու չարչարել. յոգնած՝ ուժասպառ ընկնել» իմաստը: Բացի յիշուած լիտվ. nōvyti «չարչարել, տանջել. աւերել. ոչնչացնել», չեխ. unaviti «յոգնեցնել, հիւժել», ռուս. учивать (учить) «վհատել, յուսալքուել» ձեւերից (աւելի հեռու է կանգնած իմաստով գոթ. naurops «կարիք» բառը), կարելի է նշել նաեւ ռուս. учить «մղկտալ, կսկծալ. նուալ, նվնվալ», չեխ. nyti «նուաղել, հիւժուել, կարօտել», թիս. Ա. nōwām «հիւանդ» եւ այլն: Կապ ունի՞ արդեօք սրա հետ ռուսերէնին իմաստով մօտ նուաղ բայը, որ համարում է բնածայնական կազմութիւն:

Այս ստուգաբանութեան մէջ հնչիւնական որոշ դժուարութիւն է յարուցում բուն նախածեւի վերականգնումը. նու-ի համար այդ դիրքում աւելի հաւանական է *neu-, քան *nāu- նախածեւը: